DOI:10.56653/18290361-2024.14-130

Լիլիթ Տեր-Մինասյան

Գիտությունների Ազգային Ակադեմիայի
Հնագիտության և Ազգագրության ինստիտուտ
lilitterminasyan@gmail.com

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆ, ՄԻՔԱՅԵԼ ՄԱԶՄԱՆՅԱՆ. ԱՆԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԹՈՐԱՄԱՆՅԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՀՌՉԱԿՈՒՄ*

Հիմնաբառեր. Անի, ճարտարապետություն, միջնադար, Թորամանյան, որմնանկարներ, եկեղեցի, հուշեր:

Ներածություն

Հոդվածը նվիրված է խորհրդային ճարտարապետությունը կերտած անձանցից մեկի՝ Միքայել Մազմանյանի ունեցած դերին Թորոս Թորամանյանի գիտական ժառանգության ուսումնասիրության, հանրահռչակման գործում և նրա որպես կամավոր մասնակցությանը Անիի հնագիտական արշավախմբի աշխատանքներին: Անիում արված աշխատանքները առիթ են հանդիսացել Թորոս Թորամանյանի հետ ծանոթության և ապագայում բարեկամության համար: 1933 թվականին Մազմանյանը ձեռնամուխ է եղել Թորամանյանի աշխատությունների ամփոփ հրատարակության գործին, կազմակերպել է մեծ գիտնականի 70-ամյակին նվիրված հոբելյանական երեկոն, նաև հավաքագրել է ժամանակակիցների հուշերը Թորոս Թորամանյանի մասին:

Մազմանյանը եղել է ոչ միայն հայ Ավանգարդ ճարտարապետության հիմնադիրներից (Хан-Магомедов 1996, 603-604) քաղաքաշինարար (Бальян 2023, 47-56), այլև ճարտարապետ-տեսաբան: Իր նախագծերը նա հիմնավորել է նախապես կատարված հետազոտություններով, որոնք հաճախ ամփոփվել են հրատարակված հոդվածներում: Նա ուսումնասիրություններ է կատարել նաև Անիի ճարտարապետության շուրջ, դասախոսություններ է կարդացել՝ նվիրված Տրդատ ճարտարապետին, Անիի ճարտարապետությանը:

Ներկայացված հոդվածը հիմնված է ինչպես հրատարակված աշխատանքների, այնպես էլ արխիվային տվյալների վրա: Գիտական շրջանառության մեջ են դրվում մի շարք մինչ այժմ չհրատարակված փաստաթղթեր և նյութեր Միքայել Մազմանյանի անձնական արխիվից:

* Ստացվել է 29.06.2024, ուղարկվել է գրախոսման 09.07.2024, ընդունվել է տպագրության 01.11.2024:

Անիի հնագիտական արշավախմբում

Անիում առաջին անգամ Մազմանյանը եղել է 1914 թվականին, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի իր դասընկերների հետ: Անիում նրանք անց են կացրել երեք օր: Դեպի Անի և մի շարք այլ պատմական հուշարձաններ ուղևորությունը Ներսիսյան դպրոցի աշակերտները ձեռնարկել են ոգեշնչված Թորոս Թորամանյանի կարդացած զեկուցումից: Թորամանյանը «Հայ ճարտարապետության ընդհանուր տեսությունը» թեմայով զեկուցումը կարդացել է 1914 թվականի մարտի 17-ին Թիֆլիսի ժողովարանի դահլիճում (Թորամանյան 1914): Երեկոյի բացման խոսքն ասել է Հովհաննես Թումանյանը: Դասախոսությունը մեծ տպավորություն է թողել պատանի Մազմանյանի և նրա դասընկերների վրա: Իր հուշերում նա Թորամանյանին նմանեցնում է Արագածի բարձունքից պոկված հսկա ժայռաբեկորի, հիշում է. «Դահլիճը հուզվում էր, ալեկոծվում զեկուցողի հաղորդումներին համընթաց, ծնվում ու թունդ էին առնում ազգային արժանապատվության ու հպարտության զգացմունքներ իրենց բոլոր ելևէջներով ու երանգներով» (Մազմանյան 2007):

Թորամանյանի կարդացած դասախոսությունները, ժամանակակիցների վկայությամբ, մեծ դեր են կատարել հայկական ճարտարապետության հանրահռչակման և ազգային գիտակցության զարթոնքի գործում:

Երկրորդ անգամ Մազմանյանն Անի է այցելել 1916 թվականին Ներսիսյան դպրոցի իր դասընկեր Արտաշես Վրույրի հետ և այնտեղ անց է կացրել մի ամբողջ ամառ: «Անին, որպես կախարդական մագնիս, ձգում էր դեպի իրեն խանդավառ պատանուն» (Վրույր 1964): Արտաշեսի հայրը՝ Արամ Վրույրը Մառի արշավախմբի լուսանկարիչն էր և Արտաշեսը Անիի «հնաբնակներից» էր: Նա ընկերոջը ներկայացրել է Նիկողայոս Մառին: Մառը պատանի Միքայելին հանձնարարել է արտանկարել որմնանկարներ և անել հուշարձանների ներքին և արտաքին տեսքերի գծանկարներ: Մազմանյանն այդ ամռան ընթացքում ջրաներկով արտանկարել է հատվածներ Տիգրան Հոնենց եկեղեցու որմնանկարներից՝ «Ս. Գրիգորը Տրդատի առաջ» (նկ. 1), «Ս. Գրիգորին ընդառաջ դուրս եկած Տրդատն ու աբխազաց, վրաց, ալանաց թագավորները» (նկ. 2) տեսարանները: Կատարել է ճարտարապետական կոթողների, այդ թվում՝ Անիի Մայր Տաճարի, Սմբատյան պարիսպների, Հովվի եկեղեցու գծանկարները: Ինչպես ինքն է ասել՝ Անիում 1916-ի ամռանը ճաշակել է հայ ճարտարապետության կերտվածքների, կոթողների առնական քնարականությունը (Մազմանյան 2007): Միջնադարյան հուշարձանների հետ ծանոթությունը մեծ հետք են թողել ապագա ճարտարապետի մտածելակերպի և ճաշակի ձևավորման վրա՝ «Կախարդական քաղաքը, որպես մի նահապետ, ասես անտեսանելի ձեռքով կերտում է ապագա Միքայել ճարտարապետի հոգին, նա սաղմնավորում է նրա էությունը իր դարերի փորձով ու աննախընթաց վսեմ արվեստով» (Վրույր 1964):

1916 թվականի ամռանը Թորամանյանը Անիում չի եղել: Տուն դարձի ճանապարհին Միքայելն այցելում է Թորամանյանին, որպեսզի ցույց տա անվանի գիտնականին իր արած աշխատանքները (նկ. 3): Թորամանյանն այդ ժամանակ բնակվել է Գյումրիում, մի հարկանի քարաշեն տան մեջ, իր համար սովորական դարձած

ասկետիկ պայմաններում: Մի սենյակում, որը միաժամանակ եղել է ննջարան, ճաշասենյակ և աշխատասենյակ: Թորամանյանը Միքայելի գծանկարների տակ գրում է ամեն բեկորի ու կառույցի ժամանակաշրջանը: Ապա երբ իմանում է, որ մի քանի տղաներով իջել են ստորգետնյա Անի, խանդավառվում է, սկսում է հարցեր տալ: Չնայած, որ նա Անիում երկար տարիներ էր անց կացրել, երբեք ստորգետնյա քաղաք չէր իջել շատ պարզ պատճառով: Անցքը որով սողալով պետք էր ներս մտնել շատ նեղ էր և Թորամանյանը ֆիզիկապես չէր կարող այնտեղ մուտք գործել: Թորամանյանը հորդորում է Միքայելին շարունակել զբաղվել հայկական ճարտարապետությամբ, բայց և զգուշացնում է, որ այդ ճանապարհը հեշտ չէ և լի է նյութական զրկանքներով (Մազմանյան 2007):

Թիֆլիս վերադառնալուց հետո Մազմանյանը գրում է իր անդրանիկ հոդվածը Ներսիսյան դպրոցի «Երգ ու ներկ» աշակերտական ամսագրում, որը նվիրված էր Անիի Մայր տաճարին (նկ. 4): Հոդվածում նա տեղադրել է նաև ջրաներկով իր կատարած Մայր տաճարի նկարը: Մազմանյանի արխիվում մի հետաքրքիր հուշ է պահպանվել «Երգ ու ներկ» ամսագրի հետ կապված (նկ. 5): 1916 թվականին Թիֆլիսում «Գիր» գրախանութի մոտ նա մոտենում է Հովհաննես Թումանյանին և խնդրում է ծանոթանալ իրենց աշակերտական ամսագրի հետ: Թումանյանը սկսում է թերթել ամսագիրը, ասում է. «ինչ էլ լավ անուն եք դրել»: Այնուհետև նրա ուշադրությունն է գրավում Անիի Մայր եկեղեցու մասին հոդվածի վերջին պարբերությունը. «Անիում այս միակ եկեղեցին է, որ Պետերբուրգի Ակադեմիային չի պատկանում, այլ գտնվում է Անիի վարդապետի խնամքի տակ: Վերջինս տոն օրերին աստվածային պաշտամունք է կատարում եկեղեցիում, ուր հավաքվում են մոտակա գյուղերից բազմաթիվ գյուղացիներ՝ ողջակեզ անելու ու աղոթելու՝ կրկնելով այն աղոթքները, որ մի ժամանակ մեր նախահայրերն էին թնդեցնում այդ հրաշակերտ եկեղեցում»: Հովհաննես Թումանյանը խրախուսական խոսքեր է ասում, որոնք ոգևորում են երիտասարդին (ՄՄ-ի անձնական արխիվ):

Թորամանյանի գիտական ժառանգության հանրահռչակում

1921 թվականին Մազմանյանը մեկնում է Մոսկվա՝ ուսումը շարունակելու ՎԽՈՒՏԵՄԱՍ-ում (Տեր-Մինասյան 2019): Սակայն կապը Թորամանյանի հետ աշխատում է չկորցնել: 1924-ին ամառային արձակուրդին գալով Հայաստան, այցելում է Թորամանյանին, ով այդ ժամանակ ապրում էր Էջմիածնում: Զրուցում են մինչև ուշ երեկո, Թորամանյանն ապագա ճարտարապետին է նվիրում իր «Տեկորի տաճարը» գիրքը:

1929-ից Մազմանյանը սկսում է աշխատել Երևանում և Թորամանյանի հետ շարունակում է մտերմությունն արդեն որպես կրտսեր գործընկեր (Գրիգորյան և այլք 2020, 12-22): Առավել ևս, որ Մազմանյանը նախագծմանը զուգահեռ զբաղվում էր նաև հայկական ճարտարապետության ուսումնասիրությամբ: 1933-ի աշնանը Թորամանյանը նրան տրամադրում է իր լուսանկարչական ապարատը՝ նկարելու համար այն հուշարձանները, որոնց չափագրություններն էր կատարում այդ ընթացքում: Հուշարձանների թվում էին՝ Երերույքը, Պտղնին, Ավանը: Մազմանյանն ինչպես տարիներ առաջ Անիից վերադառնալիս, իր կատարած չա-

փագրությունները ներկայացնում է Թորամանյանի քննարկմանը: Պտղնիի չափագրության մեջ նրա ուշադրությունը գրավում է ներսի կողմից հյուսիս-արևելյան անկյունում մնացած միակ քարը, որի շնորհիվ միայն կարելի էր գտնել նավի ծածկն իր բարձրությամբ և կորագծով: Թորամանյանն ասում է. «Ես շատ պատասխանատու քար է և լավ է, որ նկատել ու չափագրել եք: Այսքան մանրամասն չափագրելու հնարավորություն չեմ ունեցել ես, ժամանակս սուղ է եղել միշտ» (Մազմանյան 2007):

Մազմանյանը կարևորել է պատմական և ժողովրդական ճարտարապետության ուսումնասիրությունը, թեև դեմ է եղել անցյալի ծավալային ձևերի և դեկորատիվ թեմաների մեխանիկական կրկնությանը: Իր տեսական հոդվածներում նա հիմնավորել է, այդ գաղափարը նրանով որ, մեր միջնադարյան վարպետները լավագույնս օգտագործել են իրենց ժամանակի շինտեխնիկան ու նրանից բխող ծավալները և այսօրվա ճարտարապետը պետք է վարվի նույն կերպ ժամանակակից արտահայտչամիջոցների հետ (Մազմանյան 1928):

Միքայել Մազմանյանի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ[1] 1933 թվականին շինարարական (հետագայում պոլիտեխնիկ) ինստիտուտում, ճարտարապետության ամբիոնին կից ստեղծվել է հայ ճարտարապետության ուսումնասիրության կենտրոն (Մազմանյան 1934ա): Մազմանյանը Թորոս Թորամանյանին հրավիրել է մասնակցելու կենտրոնի գիտամանկավարժական աշխատանքներին: Կենտրոնը ուսումնասիրել է հայկական ճարտարապետության հուշարձանները, համադրել դրանք, փորձել հասկանալ տարբեր տիպերի ծագումն ու զարգացումը: Առանձնակի ուշադրություն է դարձվել հայկական ճարտարապետությունը կերտած վարպետների մասին տեղեկույթի հայթայթմանը: Կենտրոնի աշխատանքներին մասնակցել են Կոնստադին Հովհաննիսյանը, Արդվարդ Կանայանը, Գևորգ Քոչարը, Արտաշես Վրույրը, Արա Վրույրը:

1933 թվականին Մազմանյանը նախաձեռնում է Թորամանյանի գիտական ժառանգությունը մեքենագրելու և հրատարակության պատրաստելու գործը: Թորամանյանն արդեն վատառողջ էր և նրա համար դժվար էր միայնակ ի մի բերել իր հսկայածավալ աշխատանքները (նկ. 7):

Թորոս Թորամանյանի գիտական ժառանգության, հայկական ճարտարապետության ուսումնասիրության գործում նրա ունեցած վաստակի մասին Մազմանյանը զեկուցել է Հայաստանի ճարտարապետների միությունում (նկ. 6): Միության նախագահ Գևորգ Քոչարի գլխավորությամբ դեկտեմբերի 22-ին տեղի ունեցած ճարտարապետների միության կազմհանձնաժողովի նիստի №4 արձանագրությունից տեղեկանում ենք, որ լսել են Թորոս Թորամանյանի 30-ամյա գործունեության մասին Միքայել Մազմանյանի զեկուցումը: Որոշել են՝ ա. Բարձր գնահատելով ընկ. Թորամանյանի գործունեությունը պատմական Հայաստանի ճարտարապետության գործում միջնորդել ՀՍԽՀ Կենտգործկոմի առաջ տալու ընկ. Թորամանյանին ժողովրդական ճարտարապետ-գիտնականի կոչում, բ. Հանձնարարել ընկ. Մ. Մազմանյանին պարբերական մամուլին տալու հոդված

1 Մազմանյանը եղել է պոլիտեխնիկ ինստիտուտի առաջին ռեկտորը (1930-1935)

ընկ. Թորամանյանի գործունեության արժեքավորման մասին (ՄՄ-ի անձնական արխիվ)։

1934 թվականի մարտի 18-ին լրանալու էր Թորամանյանի ծննդյան 70-ամյա և հայկական ճարտարապետության ուսումնասիրությամբ զբաղվելու 30-ամյա հոբելյանները։ Միքայել Մազմանյանը դիմում է Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանին Թորամանյանի հոբելյանը կազմակերպելու համար։ Խանջյանը սկզբից կատակով ասում է. «Ինչ է արել որ, մի քանի եկեղեցի է չափել էլի», այնուհետև հանձնարարում է իր տեղակալ Ռուբեն Դաշտոյանին կազմակերպել մեծ գիտնականի հոբելյանական երեկոն (Մազմանյան 2007)։ Թորամանյանի որդին՝ Գառնիկ Թորամանյանը հիշում է, որ Մազմանյանը հոբելյանական երեկոն նախաձեռնել է հոր կամքին հակառակ (Մազմանյան և այլք 2005, 233), իսկ դուստրը՝ Նազիկ Թորամանյանը գրում է, որ չնայած Մազմանյանի թախանձանքներին հայրը ներկա չի գտնվել երեկոյին, վատառողջ լինելու պատճառով (Մազմանյան և այլք 2005, 223)։ Հանդիսավոր նիստին մասնակցել է Թորամանյանի ընտանիքը։ Նիստը տեղի է ունեցել Գրողների տան դահլիճում, որն այդ ժամանակ գտնվում էր «Կուլտուրայի տան» շենքում[2]։ Նիստը վարել է ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը։ Միքայել Մազմանյանը հանդես է եկել ծավալուն ելույթով, որի տարբերակները այնուհետև հրատարակվել են՝ Գրական թերթ, Խորհրդային Հայաստան, Խորհրդային ճարտարագետ թերթերում (Մազմանյան 1934 բ)։ Ելույթներ են ունեցել նաև Մարտիրոս Սարյանը, Աշխարհիբեկ Քալանթարը, Ստեփան Լիսիցյանը և այլք։ Հանդիսությունը տեղի է ունեցել փետրվարի 15 ին։ Ամենայն հավանականությամբ կազմակերպիչները շտապել են, որպեսզի գիտնականը հասցնի այն տեսնել և չեն սխալվել։ Թորամանյանն իր երկրային ուղին ավարտել է մարտի 1-ին, հոբելյանական երեկոյից երկու շաբաթ անց։ Իր ահռելի վաստակի համար գոնե ինչ-որ չափով գնահատված և մեծարված։

Գիտնականի մահից հետո Լուսժողկոմ՝ Ներսես Ստեփանյանի հրամանով ստեղծվել է հանձնաժողով Թորամանյանի ժառանգությունը ցուցակագրելու և հրատարակման պատրաստելու համար (նկ. 8)։ Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Զորյան, անդամներ՝ Ա. Թամանյան, Մ. Մազմանյան, Ս. Տեր-Հակոբյան։ Մի քանի ամսվա ընթացքում Մազմանյանի ղեկավարությամբ կազմվել է Թորամանյանի գործերի ցուցակը, որոնք նախատեսված էր հրատարակել երեք հատորով։ Նույն թվականի դեկտեմբերի 19-ին տեղի է ունենում հանձնաժողովի նիստ։ Հանձնաժողովի կազմում տեղի էր ունեցել փոփոխություն՝ Ա. Թամանյանը լքել էր հանձնաժողովը, իսկ Վ. Թորամանյանը համալրել էր հանձնաժողովի կազմը։ Նիստի ընթացքում հանձնաժողովը հաստատել է Մազմանյանի կազմած ծրագիրը և հանձնարարել է նրան շարունակել Թորամանյանի արխիվում եղած նյութերը ընտրելու և հրատարակության պատրաստելու աշխատանքները։ Մազմանյանը շարունակել է Թորամանյանի նյութերի հետ աշխատանքը, կազմել է երեք հատորների

2 Ներկայիս «Առնո Բաբաջանյան» համերգասրահի շենքում։ Գրողների տան դահլիճը տեղակայված է եղել Հանրապետության հրապարակին նայող թևում։

մանրամասն ցուցակները, սակայն աշխատանքն ավարտելու հնարավորություն չի ունեցել, քանի որ 1937 թվականի սեպտեմբերին նա ձերբակալվել է որպես ժողովրդի թշնամի: Հետագայում Թորամանյանի գործերը հրատարակելու համար ստեղծվել է նոր հանձնաժողով ԽՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի պատմության ինստիտուտում (Պապուխյան 2005, 58): Աշխատանքներն ավարտին է հասցրել Կարո Ղաֆադարյանը, «Նյութեր հայկական ճարտարապետության» առաջին հատորը լույս է տեսել 1942 թվականին, երկրորդը՝ 1948 թվականին: Միքայել Մազմանյանն այդ ժամանակ գտնվում էր աքսորավայրում՝ անդրբևեռյան Նորիլսկում և բնականաբար բացառվում էր որևէ կերպ հիշատակել այդ գործում նրա ունեցած ավանդի մասին: Այդ տարիներին, նույնիսկ բռնադատված ճարտարապետների նախագծերով կառուցված շենքերի մասին գրելիս արգելված էր հիշատակել նրանց անունները:

1955 թվականին աքսորից վերադառնալուց հետո Մազմանյանը ձեռնամուխ է լինում Թորամանյանի մասին հուշերի հավաքագրմանը: Նրա խնդրանքով մեծ գիտնականի մասին իրենց հուշերն են գրել արվեստի և մշակույթի բազմաթիվ գործիչներ, այդ թվում՝ Մարտիրոս Սարյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Հովհաննես Խալփախչյանը և այլք: Սակայն գիրքն ամբողջացնել նա չի հասցրել: 1971 թվականին Մազմանյանի վախճանվելուց հետո Թորամանյանի մասին հուշերի հրատարկությունը հանձնարարվել է Արվեստի ինստիտուտի գիտաշխատող Նուբար Պապուխյանին, ով և գիտնականի որդու՝ Գառնիկ Թորամայանի հետ միասին ավարտին է հասցրել «Ժամանակակիցները Թորոս Թորամանյանի մասին» գիրքը: Այն լույս է տեսել 2005 թվականին: Գրքի կազմում տեղ է գտել նաև Մազմանյանի հոդվածը Թորոս Թորամանյանի մասին: Սակայն անձամբ Մազմանյանի հուշերը դուրս են մնացել գրքից, քանի որ նա չէր հասցրել դրանք ամբողջացնել և մեքենագրել: Թորամանյանի մասին Մազմանյանի հուշերը, հնարավորինս ի մի բերած հրատարակվել են 2007 թվականին «Ճարտարապետություն և Շինարարություն» ամսագրում (նկ. 9):

Մազմանյանը Անիի ճարտարապետության մասին

Անիի հուշարձանների հանդեպ սերն ու հետաքրքրությունը Մազմանյանը պահպանել է ողջ կյանքի ընթացքում: Նա մի շարք զեկուցումներ է կարդացել Հայաստանում և սփյուռքի գաղթօջախներում՝ նվիրված Անիի հուշարձաններին «Անիի Մայր Տաճարը», «Տրդատ ճարտարապետ» թեմաներով:

Մազմանյանի արխիվում պահպանվել են անտիպ էջեր՝ նվիրված Անիի ճարտարապետությանը: Անիի քաղաքաշինության մասին նա գրել է՝ «Երբ գրվի Հայաստանի քաղաքաշինության պատմությունը, պարզ կդառնան այն ավանդները, որ մնացել են մեզ և պիտանի են մեր օրերում: Անի քաղաքը կառուցվել է նպատակահարմար վայրում, պաշտպանական բոլոր հարմարություններով, բնության, շրջապատին, ռելիեֆի առավել նպատակահարմար օգտագործումով, այդ քաղաքը բնական ծնունդի կերպարանք է ստացել» (ՄՄ-ի անձնական արխիվ):

Միջնադարյան ճարտարապետության գոհարներից մեկի՝ Հովվի եկեղեցու մասին գրել է. «Այս փոքրիկ կերտվածքի մեջ, ինչպես արևը մի կաթիլ ջրի մեջ,

արտացոլվել են հայ ճարտարապետության առաջավոր հատկանիշները, դարաշրջանի լավագույն մտահաղացումները: Քմահաճ ճարտարապետական խաղ, որով հեղինակը կարծես թե ցանկություն է ունեցել ցույց տալ իր հանճարի կայծը գողտրիկ այս ծավալով» (ՄՄ-ի անձնական արխիվ): Հովվի եկեղեցու կոնստրուկտիվ հնարքներից առանձնացրել է ջլակամարը և որմնամույթը: Նկատել է, որ արտաքին քարերի խոշորությունը ստեղծում է հոյակապ մասշտաբ և մոնումենտալություն:

Մազմանյանին Անի մայրաքաղաքի հետ կապող ևս մի դրվագ կա: Անիից նա մի նախշազարդ քար է բերել իր հետ, որը միշտ եղել է իր աշխատասենյակում: Ամենայն հավանականությամբ դա Պարոնի պալատի շքամուտքի քարերից է: Մազմանյանի ընտանիքը քարը նվիրել է Հայաստանի պատմության թանգարանին[3]:

Եզրակացություն

Անիի հուշարձանների հետ ծանոթությունը Մազմանյանի համար եղել է հայկական ճարտարապետության ճանաչողության առաջին քայլը: Անին մեծ ազդեցություն է թողել նրա ճաշակի և մտածելակերպի ձևավորման վրա: Անիի ճարտարապետական դպրոցի հանդեպ հետաքրքրությունը նրան ուղեկցել է ողջ կյանքի ընթացքում, նա կարդացել է մի շարք դասախոսություններ՝ նվիրված այդ թեմային:

Թորոս Թորամանյանի հետ ծանոթությունը, որ սկիզբ էր առել 1916 թվականին, 30-ականներին վեր է ածվել գործընկերային հարաբերությունների: Մազմանյանը ներկայացրել է Թորամանյանի գիտական ժառանգությունը ժամանակի պետական և հասարակական կառույցներում՝ Երևանի Պոլիտեխնիկ ինստիտուտում, Հայաստանի ճարտարապետների միությունում, ՀԽՍՀ կոմկուսի կենտրոնական կոմիտեում: Մազմանյանը մեծ ավանդ է ունեցել Թորամանյանի գիտական ժառանգությունը հրատարակության պատրաստելու և նրա մասին հուշերը հավաքագրելու մեջ: Որոշ դեպքերում այդ ավանդը լռության է մատնվել, սակայն չի կորել:

Թորոս Թորամանյանի և Միքայել Մազմանյանի գործընկերությունը և մարդկային մտերմությունը կարող է օրինակ լինել ավագ և կրտսեր սերունդներին պատկանող գիտնականների փոխհարաբերությունների համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Սկզբնաղբյուրներ

ՄՄ-ի անձնական արխիվ – Միքայել Մազմանյանի անձնական արխիվ, պահվում է Մազմանյանի ընտանիքում

Ուսումնասիրություններ

ԳՐԻԳՈՐՅԱՆ և այլք 2020 – Գրիգորյան Մ., Կուրթաջյան Ռ., Վարդապետյան Ե., *Միքայել Մազմանյան*, Երևան, 2020:

3 Այժմ զարդաքարը ներկայացված է Հայաստանի պատմության թանգարանում բացված «Անի. Բագրատունիների տիեզերահոչակ մայրաքաղաք» ցուցադրությունում:

ԹՈՐԱՄԱՆՅԱՆ 1914 – Թորամանյան Թ., Հայկական ճարտարապետությունը, *Հորիզոն*, Թիֆլիս, 1914, № 61:

ՄԱԶՄԱՆՅԱՆ 1928 – Մազմանյան Մ., Ճարտարապետության և ոճի մասին, *Խորհրդային Հայաստան*, Երևան, 1928, № 150:

ՄԱԶՄԱՆՅԱՆ 1934a - Մազմանյան Մ., Թորոս Թորամանյան, *Գրական Թերթ*, Երևան, 1934, № 7:

ՄԱԶՄԱՆՅԱՆ 1934b – Մազմանյան Մ., Մեր ճարտարապետության մարքսիստական պատմության համար, *Գրական Թերթ*, Երևան, 1934, № 29:

ՄԱԶՄԱՆՅԱՆ 2007 – Մազմանյան Մ., Մեծերը Մեծերի մասին. Թորոս Թորամանյանի, *Ճարտարապետություն և շինարարություն*, Երևան, 2007, № 5, 25-27:

ՄԱԶՄԱՆՅԱՆ և այլք 2005 – Մազմանյան Մ., Պապուխյան Պ., Թորամանյան Գ., *Ժամանակակիցները Թորոս Թորամանյանի մասին*, Երևան, 2005:

ՊԱՊՈՒԽՅԱՆ 2005 – Պապուխյան Ն., *Թորոս Թորամանյան. Կյանքն ու գործը*, Երևան, 2005:

ՎՐՈՒՅՐ 1964 – Վրույր Ա., *Անիում*, Երևան, 1964:

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ 2019 – Տեր-Մինասյան Լ., Մերժելով անցյալի կույր ընդօրինակման ճանապարհը, *Ճարտարապետություն և շինարարություն*, Երևան, 2019, № 11-12, 12-26:

БАЛЬЯН 2023 – Бальян К. В., Мазманян после Таманяна. Дискуссия о развитии национальной архитектуры Армении в 1920-е и в 1960-е годы. Часть 1, *Теория и история архитектуры*, Санкт-Петербург, 2023, № 1, ст. 47-55 https://doi.org/10.22227/2712-8237.2023.1.47-55 .

ХАН-МАГОМЕДОВ 1996 – Хан-Магомедов С. О., *Архитектура Советского Авангарда. Книга первая. Проблемы формообразования. Мастера и течения,* Москва, 1996.

Lilit Ter-Minasyan

Institute of Archaeology and Ethnography NAS RA
lilitterminasyan@gmail.com

TOROS TORAMANYAN, MIKAEL MAZMANYAN. FROM EXCAVATIONS IN ANI TO POPULARIZATION OF TORAMANYAN'S SCIENTIFIC HERITAGE

Keywords: Ani, architecture, Middle Ages, Toramanyan, frescoes, church, memories.

Mikael Mazmanyan, one of the key figures in Armenian architecture of the 20th century, made a great contribution to the research and popularization of the scientific heritage of Toros Toramanyan. In 1916, while participating as a volunteer in excavations in the city of Ani, Mazmanyan made a number of copies of church frescoes, as well as drawings of architectural monuments. The Ani monuments largely influenced the formation of the thinking and taste of the future architecture. Throughout his creative life, he never stopped studying the Ani school of architecture and gave a series of lectures on this topic. Mazamanyan and Toramanyan met during the discussion of young Mazmanyan works made in Ani.

In the early 1930s, Toramanyan and Mazmanyan were already colleagues. Mazmanyan, along with making architectural designs, studied monuments of Armenian architecture. In 1933, at the Yerevan Polytechnic Institute, he organized a center for the study of Armenian architecture. Toramanyan was invited to work there. In the same year, at the Architects' Union of Armenia, Mazmanyan made a report on Toramanyan's enormous contribution to the study of national architecture. In 1934, he initiated a commemorative

evening in honor of the 70th anniversary of the great scientist and published several articles about his scientific activities. After Toramanyan's death in 1934, he was a member of Committee on Scientific Publications of Toromanyan works. Mazmanyan compiled a list of works that were planned to be published in three volumes. However, the work remained unfinished, since in 1937 he was repressed to Norilsk.

After returning from polar Norilsk, Mazmanyan began collecting the memories of his contemporaries about Toramanyan. However, he did not manage to complete this work either and only after his death in 1971, the book "Contemporaries about Toros Toramanyan" was completed by N. Papukhyan and G. Toramanyan.

The friendship and cooperation of Toros Toramanyan and Mikael Mazmanyan is an example of the relationship between scientists of the older and younger generations.

Лилит Тер-Минасян

Институт Археологии и Этнографии НАН РА
lilitterminasyan@gmail.com

ТОРОС ТОРАМАНЯН, МИКАЭЛ МАЗМАНЯН. ОТ РАСКОПК В АНИ ДО ПОПУЛЯРИЗАЦИИ НАУЧНОГО НАСЛЕДИЯ ТОРАМАНЯНА

Ключевые слова: Ани, архитектура, средневековье, Тораманян, фрески, церковь, воспоминания.

Микаэл Мазманян - одна из ключевых фигур армянской архитектуры 20-го века, внес большой вклад в дело исследования и популяризации научного наследия Тороса Тораманяна. В 1916 году, участвуя в качестве волонтёра в раскопках города Ани, Мазманян сделал ряд копий церковных фресок, а также рисунков архитектурных памятников. Анийские памятники во многом повлияли на формирование мышления и вкуса будущего зодчего. На протяжении творческой жизни он не переставал изучать Анийскую архитектурную школу, прочёл серию лекций на эту тему. Знакомство с Тораманяном также началось с обсуждения работ юного Мазманяна, сделанных в Ани.

В начале 30-ых годов Тораманян и Мазманян были уже коллегами. Мазманян наряду с проектированием занимался изучением памятников армянской архитектуры. В 1933 году, в Ереванском Политехническом институте он организовал центр по изучению армянской архитектуры, куда пригласил работать Тораманяна. В том же году, в Союзе Архитекторов Армении Мазманян сделал доклад об огромном вкладе Тораманяна в исследование национальной архитектуры. В 1934 году был инициатором юбилейного вечера в честь 70-летия великого учёного и опубликовал несколько статей о его научной деятельности. После смерти Тораманяна в 1934 году был в составе комиссии по подготовке к печати его научных работ. Мазманян составил список трудов, которые планировалось опубликовать в трёх томах. Однако работа осталась незавершенной, поскольку в 1937 году он был репрессирован в Норильск.

После возвращения с заполярного Норильска Мазманян начал собирать воспоминания современников о Тораманяне. Однако и эту работу он не успел завершить, и только после его кончины в 1971 году книгу "Современники о Торосе Тораманяне" завершили Н. Папухян и Г. Тораманян.

Дружба и сотрудничество Тороса Тораманяна и Микаэла Мазманяна может служить примером отношений между учёными старшего и молодого поколения.